



1832

5. IX. 4

184





1930 1931 1932 1933 1934 1935



Բամենգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 Ֆր. Պալքանեան երկիրներ 50՝ Սէնթ, արտասահման 60 Սէնթ
 RÉDACTEUR H. N. GHAZAROSSIAN, 29, Rue Fauchier — MARSEILLE (France)

ԹԻԻ 1 2. ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1930

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԼԻՐ, ԼՈՒՍԱՒՈՐՈՒՒՄ

(Ծննդեան խորհրդածութիւններ)

Հինգ տարիէ ի վեր «Բանբեր» ամսէ ամիս Ձեզի եկաւ: Ամէն անգամ պատգամով մը, Թերեւս երբեմն մասնաւոր պատգամով մը Ձեզի համար այդ օրուան վիճակին եւ պէտքին համաձայն, այնպէս որ դուք այդ ատեն գոհութիւն մատուցիք Տէրոջը որ Նա հեռուէն՝ Ձեր վիճակին անտեղեակ ձեռքերու միջոցաւ ղրկեց Ձեր մխիթարութիւնը: Այո, Տէրոջը միջոցներն ու մեծութիւնը զանազան են:

Այս հինգ տարիներու մէջ մեր նպատակը ուրիշ բան եղած չէ, եթէ ոչ մարգարէին նման «Բանբեր»ի միջոցաւ Տէրոջը խօսքը ղրկել հայ ազգին ցրուած բնկորներուն ըսելով «Ելի՛ր, լուսաւորու՛»: Մեր կոչման ու մեզի եկած ձայնին հնազանդելով՝ այս տարի դարձեալ նոյն ուղղութիւնով պիտի շարունակենք, ինչդրեւ լով Անկէ որ գործածէ Թերթիս մէջ գտնուած իւրաքանչիւր յօդուածը հոգիներու փրկութեան եւ սրբութեան համար:

Ծննդեան եւ նոր տարուան այս օրերուն մէջ ալ ըսելիք ունի Տէրոջը պատգամը, որ մեզի իբր նշանաբան ընտրած ենք: Ունի ըսելիք հաւատացեալներու, ունի ըսելիք անապաշխար հոգիներու:

Ելի՛ր, լուսաւորու՛: Մարդկութեան ամենէն շատ բաղձացած բանը լոյսն է, վասնզի կը մխիթարէ: Տէրոջը զաւակներէն մէկուն վերջին խօսքերէն մին եղած է, «Որքա՛ն կ'ուրախանամ որ քիչ վերջ լուսոյ մէջ

պիտի ըլլամ»: Մեր ամենուն յոյսն է այն վերի լոյսը որուն մէջ յաւիտենապէս պիտի ըլլանք, այդ պատճառաւ Պօղոս առաքեալ ալ կ'ըսէ, «Հիմա մենք որպէս Թէ հայելիի մէջ կը տեսնենք անյայտ կերպով, բայց այն ատեն երես առ երես»: Այսուամենայնիւ այդ յաւիտենական լոյսը հաստատուած է այն լոյսին վրայ որ յայտնուեցաւ մարդկութեան ասկէ քսան դարեր առաջ, երբ ծագող Արեգակը վերէն այցելութեան եկաւ, խաւարի եւ մահուան ստուերի մէջ նստողներուն լոյս տալու եւ մեր ոտքերը խաղաղութեան ճամբուն մէջ շտկելու:

Ի՛նչ լուսաւոր են զուկ. Ա. եւ Բ. գլուխները, որոնց մէջ Աստուծոյ փառքը յայտնուած է եւ ուր ամէն ոք ուրախ է լուսաւոր Արեգակին ծննդեան առթիւ ու մենք եւս նոյն օրէն սկսեալ կ'ուրախանանք ամէն տարի, ամէն օր մեր փրկչին մարդեղութեան համար:

Փա՛ռք Տէրոջը, լո՛յս է այլեւս անոնց որ Յիսուսի կը հաւատան: Վասնզի Անիկա-լոյսը-փարատեց խաւարը իրենց կեանքին մէջէն: Օ՛, մեղքը ի՛նչ խաւարի մէջ բանտարկած էր մարդկութիւնը, մարդիկ կ'ապրէին, բայց խռովեալ եւ անմխիթար: Մարդկային իմացականութիւնը, փիլիսոփայութիւնը մթնշաղ մըն էր իւրաքանչիւր երբեք չէր կրցած Ֆշմարիտ ճամբան լուսաւորել, օրէնքն ալ իրաւ ուղղութիւն մը կուտար, բայց երբեք չէր կրնար ներշնչել զօրութիւն մը, զայն

կատարելու: Բայց կար խոստում մը թէ լոյսը պիտի ծագի: Խաւարի մէջ պտըտող ժողովուրդը մեծ լոյս պիտի տեսնէր, մահուան ստուերին երկիրը բնակողներուն լոյս պիտի ծագէր: Ու այդ լոյսը եկած էր, ինքը չէր լուսատու հռոմագայթ մը կամ անոր մէկ ցոլացումը, հապա նոյն ինքն ծագող լոյսը, Արեգակը: Լուսատու Արեգակը, կենսատու Արեգակը:

Եւր, լուսաւորուէ: Եթէ լուսատուն եկած է, արդեւի՞ր ո՞վ դուն որ դեռ մեղքի մուծին մէջ կը բնակիս, դուն որ այդ լուսոյ ծագելէն հարիւրաւոր տարիներ վերջը կ'ապրիս, եւր ու տես այդ լոյսին կենդանացուցիչ զօրութիւնը, տես թէ այդ լոյսը կարող եղած է կոյրերուն տեսութիւն տալու, անմխիթալները մխիթարելու, աղքատները հարստացնելու, թշուառները երջանկացնելու, մեռածներուն կեանք տալու, մեղքին ֆիրաններէն բռնուած անյոյս մեղաւորները սրբացնելու, անոնց կապուած լեզուները ազատ արձակելու:

Իրաւ թէեւ երկիրը խաւար եւ ազգերը մառախուղ պատեր է, մանաւանդ հիմա հեծանոս եւրոպայի վրայ, այսու ամենայնիւ **Տէրը ծագած է քու վրադ, ուստի եւր, լուսաւորուէ:** Մանաւանդ այսպիսի ժամանակի մը մէջ, այսինքն նոր տարուան եւ ծննդեան տօներու առթիւ, երբ դուն շատերուն պիտի երթաս ըսելու, «Շնորհաւոր ջնսնդ եւ Աստուածայայտնութիւն», կամ քեզի եկողին պատասխանես, «Յիմեալ ըլլայ յայտնութիւնն քրիստոսի», արդեօք միայն շրթունքով պիտի խօսիս, թէ իսկական թանկագին փորձառութեամբդ թէ քրիստոս յայտնուած է քեզի:

Աստուծոյ գաւազներէն մեծագոյն մաս մը այսպիսի հանդիսաւոր օրերու մէջ Աստուծոյ յայտնութեան արժանացած են: Արդ, դուն ալ, դուն ալ աստուածալին այս յայտնութեան բաժնեկից եղիր այսօր, երբ այս տուրքը կը կարդաս: **Եւր, լուսաւորուէ:** Արեգակը արդէն ծագած է, մի մնար մուծ եւ ստուերոս տեղը, մի կենար քարայրներու ցուրտ ու մռայլ ծալքերուն մէջ, դուրս եկուր Արեգակին առջեւ, Անիկա քեզ պիտի լուսաւորէ, նաեւ քեզ պիտի կենդանացնէ, քու վերջերդ բշշկէ, քեզի զօրութիւն տայ լուսաւոր կեանք մը ապրելու:

Օ՛, ի՛նչ փառաւոր է մեղքերու թողութեան գիտակցութիւնը, կեանքի ապահովութեան բարձրագոյն երաշխիքը: Արդ, հոգի 1930 տարուան՝ սկիզբը եւ ծննդեան օրերը քեզի համար ալ հոգեւոր արեւծագի օր թող ըլլայ, նշանակելի՛ օր, փրկութեան օր, վասն գի խոստումը քեզի ալ է:

Բայց մեզի հաւատացեալներու ալ թանկագին կոչ մըն է այս: Եթէ շատեր իրաւ ապաշխարութիւնը գիտեն, բայց այդ արշալոյսին միջնադրով բաւականայայտ, տարչնելով անոր մէջ կը կենան, իրենց պատուհաններուն փակերը լաւ մը գոցած՝ միայն տա՛ն ուսնելու հիշքերէն լոյս կ'ընդունին, խորհելով թէ ադ կ'ենք թաւական է, քրիստոնէութեան չա-

փագանցութիւնն ալ չափագանցութիւն է: Եղբայր, մտածէ, Թերեւս դո՛ւն ալ այս գաղափարէն ես: Գիտցիր թէ այդ ունեցած լոյսդ քեզի ժամանակի ընթացքին մէջ չպիտի բաւէ: Այդ պատճառաւ Տէրը կ'ըսէ, **Եւր, լուսաւորուէ:** Բաց հեղ մը պատուհանիդ փեղկերը, տես, Արեգակը կը փայլի իր պայծառութեամբը, քու էութիւնդ թող լուսաւորուի Անով, յարատեւ ստուերէ վնասուած աչքերդ թող լոյսէն դարձեալ տեսութեան զօրութիւն ընդունին, ընդարմացած անդամներդ սկսին շարժիլ, պաղ կեանքդ տաքնայ, անկենդան վիճակէդ կենդանութեան նշաններ երեւին: Օ՛, իրաւ քրիստոնեայ մը կը կոչուիս, Թերեւս եկեղեցւոյդ ալ անդամն ես, բայց ո՛չ եկեղեցիդ, ո՛չ քու ընտանիքդ, ո՛չ ալ քու շրջանակդ քու կեանքէդ ունէ սփռու մը տեսաւ: Զէ՛ որ Տէրը ըսած է, «Գուք էք երկրի աղը, դուք էք աշխարհի լոյսը»: Սիրելիս, լուսաւորուէ՛, որ լոյս ըլլաս: Այս օրերուն մէջ մարդիկ ընդհանրապէս նոր որոշումներ կ'ընեն, Յունվարի եօթնեակի ժողովներուն մէջ խոստովանութիւններ կ'ընեն, իրենց ուխտերը կը նորոգեն, այսպէս ալ դուն ըրէ, որպէսզի Տէրոջը փառքը քու վրադ երեւնայ, մի՛ թողուր որ ունէ շուք մը զքեզ զրկէ փրկութեան Արեգակէն:

Ու դուն, որ անկեղծօրէն քու առջեւդ դրուած ասպարէզի ընթացքը քալեցիր ամբողջ տարին, սիրելիս, քեզի համար աւելի քաղցր եւ հմայիչ է այս պատուական խօսքին հնչուն շեշտերը — **Եւր, լուսաւորուէ:** Զէ՛ որ կեանքի ընթացքը յանգրուաններով լեցուն է, չէ՛ որ առանց այդ յանգրուաններուն մոլորելու փորձութեան մէջ կ'իյնանք: Գու գիտես թէ դեռ կատարեալին հասած չես, դու գիտես թէ քու առջեւդ գտնուած ճամբան դեռ երկար է եւ վերելուկ: Սրդեօք այդ ճամբան բաւականաչափ լուսաւոր է, հետզհետէ աւելի կը լուսաւորուի՛, հետզհետէ աւելի մօտ կը տեսնե՛ս Տէրոջը փառքը, կը լսե՛ս երկնային քաղցրահնչուն երգերը. «Փառք ի բարձունս Աստուծոյ»: Քրիստոսի խաղաղութիւնը ունի՛ս քու սրտիդ մէջ, այդ խաղաղութիւնը քու մէջդ ժամանակի ընթացքին մէջ նորանոր փուլերէ կ'անցնի՛, կրնա՛ս դուն ալ Պօղոսի պէս ըսել, «Իմնք ամէնս բաց երեսով Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով՝ նոյն պատկերին կը նորոգուինք փառաց ի փառս, որպէս թէ Տէրոջը հոգիէն (Ք. կորնթ. Գ. 18): Փառաց ի փառս:

Օ՛ն զարթիր, յգնած հոգի, երգն տիա գուարժուն,
Սուրբ երկնից սրահէն, կրկին ձայն կուտայ մարդուն.
Նոր խախտիս, նոր յոյս կուտան մեզ երգին շեշտերն,
Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն:
Փառք քեզ, արդ, օրհնեալ Հայր,
Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն:

Օրհնեալ ըլլա՛յ Աստուածայայտնութիւնն
Քրիստոսի:

ԽԱԽԱՐԷՆ ԼՈՅՍԻ

Որոնք որ զԻնք ընդունեցին, անոնց
իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդի-
նէր ըԼԼալու: Յովհ. Ա. 12

Ձմեռնային գեղեցիկ երեկոյ մըն էր: Համպուրկի փողոցները ողողուած էին զբօսաշրջիկներով, որոնք դէպի սրճարան կը վազէին՝ երաժշտութիւն լսելու համար: Հնակարկատ մը իր տան քով տարածուած փոքր վրանի մը տակ նստած՝ կօշիկ կը նորոգէր: Բարձր, իր գլխուն վերէն դեղձաւիկ մը իր վանդակին մէջ բարձրաձայն կ'երգէր ու կը շաղակեատէր: Կը թուէր թէ ան իր բարեսէր տիրոջ շատ պատմելիքներ ունէր: Հնակարկատ Յովհաննէս ըսաւ, «Դուն բաղդաւոր թռչնիկ մըն ես, վասնզի լաւ խնամուած ես: Ինչո՞ւ ես ալ չըլլամ երջանիկ քրիստոնեայ մը, քանի որ ես այնքան մեծ շնորհքի արժանացած եմ»- եւ սկսաւ երգել հին ու գեղեցիկ հոգեւոր երգ մը:

Մինչ ան երեկոյեան ժամերուն այդպէս զբաղած էր եւ փողոցի անցուդարձը դիտելու համար սէկ վայրկեան իսկ գլուխը չէր կարող վեր բարձրացնել, մօտէն անցնող ուսանող մը կրպակին առջեւ կայնեցաւ ու ըսաւ. «Բա՛րեկամս, կ'երեւնայ թէ դուք երջանիկ մարդ մըն էք»: Յովհաննէս վեր նայեցաւ եւ ուրախութեամբ պատասխանեց. «Անշուշտ եւ ինչո՞ւ այդպէս պիտի չըլլամ»:

«Բայց ամէն մարդ երջանիկ չէ», յարեց օտարական երիտասարդը՝ հառաչ մը արձակելով. «Դուք ապահովաբար աղքատ էք, սակայն կ'երեւնայ թէ Ձեր աշխատանքին արդիւնքովը այդ թռչունէն զատ ոեւէ մէկը չունիք ապրեցնելիք»: Յովհաննէս խնդաց եւ սուլեց իր թռչունին: «Խայտաբղէտ լանջով պզտիկ բարեկամը տրտում ըլլալու պատճառ մը չունի, բայց մինակ անկէ չբաղկանար իմ ընտանիքս: Ես կին մը եւ եօթը զաւակներ ունիմ, գանոնք իմ աշխատանքովս սնուցանելու ստիպուած եմ: Սակայն ատով հանդերձ ես դեռ կրնամ երգել, ի՜նչպէս կը տեսնէք»:

Ուսանողը լռեց եւ սկսաւ մտածել թէ ինչո՞ւ ինքը՝ առողջ ապրուստ ճարելու մեծ յոյսեր ունեցող երիտասարդ մը՝ խաղաղութիւն չունէր: Ինքը Հրեայ մըն էր եւ կ'զգար թէ իր հոգեւոյն մէջ հին հաւատքը կորսուած էր եւ անոր տեղ նոր մը հաստատուած չէր: Անիկա սրճարանի մէջ նուագուած երաժշտութենէն փախած էր՝ պահիկ մը ման գալու համար: Սակայն աշխատասէր ու զուարթ հնակարկատին տեսքը իր ուշադրութիւնը գրաւեց, եւ ինքը ակամայ մղուեցաւ անոր հետ խօսելու եւ իմանալու թէ

այդ աղքատ մարդը ո՞ր աղբիւրէն կը հայթայթէր իր երջանկութիւնն ու գոհունակութիւնը:

Անիկա խօսակցութիւնը վերսկսելով՝ ըսաւ, «Ազնիւ բարեկամ, ես պէտք է խոստովանիմ թէ կը հիանամ տեսնելով Ձեզի նման աղքատ արհեստավորի մը երջանկութիւնը»:

«Աղքատ, աղքատ աղաղակեց Յովհաննէս, իմ պանքայի մէջ ունեցած հաշիւներէս ուսկի՞ց տեղեկութիւն ունիք: Ես Ձեր կարծածէն աւելի հարուստ եմ»:

— «Կարելի է, կարելի է» ըսաւ ուսանողը ժպտելով. «Ձեր անունը ես պօքսայի մէջ լսած ըլլալու եմ, բայց մոռցած եմ»:

— «Բաւական է», պատասխանեց Յովհաննէս, «Ատով Դուք Ձեր տգիտութիւնը խոստովանեցաք»: Յետոյ իր գործը մէկդի դնելով՝ լրջօրէն նայեցաւ ուսանողին եւ հանդարտութեամբ ըսաւ անոր, «Ես աղքատ չեմ, իմ վրաս մի խղճաք, յաւէտ նախանձեցէ՛ք ինծի, քանզի ես թագաւորի մը որդին եմ»:

Ուսանողը ընդոստ ոտքի ելաւ, խոնարհութիւն ըրաւ եւ աճապարանօք մեկնեցաւ: Ան ինքնիրենը միմռաց, «Խեղճ մարդուկ, դուն ուրախ ես, որովհետեւ յիմարացած ես: Ես իզո՞ւր քու քով մխիթարութիւն փնտոցի»:

Շաբաթ մը յետոյ ուսանողը դարձեալ նոյն փողոցէն կ'անցնէր, Յովհաննէս իր վրանին մէջ նստած կ'աշխատէր: Երբոր անոր մօտեցաւ, գլխարկը վար առնելով ըսաւ. «Բարի իրիկուն, վեհափա՛ռ»:

«Սպասեցէ՛ք, բարեկամ», աղաղակեց հնակարկատը զուարթ բայց զօրաւոր ձայնով, «Մի քանի վայրկեանի համար հոս եկէ՛ք: Ես Ձեզ կրկին տեսնելու համար ուրախ եմ: Վերջերս դուք ինձմէ շատ աճապարանօք բաժնուեցաք, քանզի մեծ հաւանականութեամբ խորհեցաք թէ ես խենդ եմ: Բայց ես այդպէս չեմ, ես շատ լուրջ կը խօսիմ: Ես դարձեալ կ'ըսեմ թէ թագաւորի մը որդին եմ եւ երբ դուք այն օր զիս ընդմիջեցիք, թագաւորութիւնը փառաբանող երգ մը կ'երգէի: Այդ երգը հիմայ կը փափաքէի՞ք լսել»: «Անշուշտ, եթէ նորին վեհափառութիւնը կ'ուզէ», ժպտելով յարեց Հրեան, վասնզի իրեն համար շատ կարեւոր էր գոհ ձգել այդ տարօրինակ մարդը, զոր ինք տակաւին խենդի մը տեղ կը դնէր: Երբ երիտասարդը արդէն նստած էր, Յովհաննէս սկսաւ «Քու թագաւորութիւնդ թո՛ղ գայ» վերտառութեամբ երգը երգել: Ան նշմարեց որ ուսանողը մեծ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր: Ուստի վերջացնելէ յետոյ հարցուց, «Այս երգին իմաստը կը հասկնա՞ք»:

Հրեան գլխու շարժումով բացասական պատասխան տուաւ: Ուստի Յովհաննէս անոր պատմեց ինչ որ գիտէր Յիսուս Քրիստոսի թագաւորութեան եւ Անոր փառքին վրայով: Ան սկսաւ դրախտի մէջ տրուած խոստումով, որ տրուեցաւ նախածնողաց թէ՛ իրենց սերունդէն մէկը օձին գլուխը պիտի ջախսէր: Ան ցուցուց թէ ինչպէս դարէ դար մարգարէութիւնները աւելի շատցան ու խորունկցան եւ թէ ինչպէս պիտի կատարուին այն ամէնը, զոր Քրիստոսի նկատմամբ Մովսէս ու մարգարէները գրած են: Յուցուց թէ պէտք էր որ նախ Մեսիան չարչարուէր եւ ապա Իր փառաւորութեան հասնէր: Յուցուց թէ հիմայ ամէն իշխանութիւն տրուած է Անոր եւ հին երկրի վրայ պիտի հաստատէ այնպիսի թագաւորութիւն մը, որուն մէջ թէ՛ Հրեայ թէ՛ Հեթանոս նոյն քաղաքացիական իրաւունքները պիտի վայելեն եւ որուն մէջ ամէն մէկ հպատակ որդի ու ժառանգորդ է եւ արտօնութիւն ունի Յիսուս արքային հետ յաւիտեանս իշխելու:

Մինչ ծեր հնակարկատը այս խոստումները կը յիշէր, իր աչքերը յուսով եւ ուրախութեամբ կը լուսավառէին: Հրեան նստած էր անոր քով եւ իր սեւ աչքերովը անթարթ կը դիտէր զայն: Առաջին անգամ անիկա իր հայրերուն տրուած խոստման վրայով կը լսէր, ուստի ընկղմած էր խոր մտածութիւններու մէջ, ու միայն այն ատեն սթափեցաւ, երբ Յովհաննէս իր ձեռքը անոր ուսին վրայ դնելով ըսաւ. «Հիմա կը տեսնէք որ ես թագաւորի մը որդին եմ: Ես երջանիկ եմ, քանզի կը ճանչնամ ու կը սիրեմ Յիսուսը եւ Անոր միջոցաւ ամէն բան իմս է: Երիտասարդ, Դուք կը հաւատա՞ք մարգարէներուն: Գիտե՞մ որ կը հաւատաք: Ձեր հայրերը կը հաւատային, բայց Դուք ալ որդեակ, պէտք է Անոր հաւատաք, Որով նկատմամբ մարգարէութիւնները եղած են եւ զՈր Աստուած խրկած է՝ Ձեր հայրերուն տրուած խոստումը կատարելու համար»:

Հրեան լռեց: Խորհուրդներ, որոնց համար ան բառ չէր կրնար գտնել, կ'ալեկոծէին իր միտքը: Վերջապէս խոնարհութեամբ հարցուց. «Ո՞ր կրնամ ես այս բաներուն վրայով աւելի իմանալ, վասնզի ես կը տեսնեմ որ Դուք ատոնց կը հաւատաք եւ ատով խաղաղութիւն ունիք»:

«Այս գիրքէն» պատասխանեց Յովհաննէս երկնցնելով անոր Աստուածաշունչ մը: «Տուն գացէ՛ք եւ հոն կարդացէ՛ք թագաւորին պետութեան վրայով, եւ եթէ իմ նշանակած կտորներս արդէն ուսումնասիրած էք, դարձեալ ինծի եկէ՛ք: Նոյն ա-

տեն ես ալ Մովսէսի նման լեռան վրայ կեցած Ձեզի համար պիտի աղաչեմ՝ այն Մէկին, զՈր Դուք դեռ չէք ճանչնար, բայց Ան կը ճանչնայ Ձեզ եւ Մովսէսէն աւելի մեծ մէկն է»: Երիտասարդ հրեան բռնեց ծեր հնակարկատին ձեռքը, երկիւղածօրէն խոնարհութիւն ըրաւ ու գնաց:

Պատմութիւնս վերջացաւ: Երիտասարդ Հրեան շատ տարիներէ ի վեր նշանաւոր քրիստոնեայ միսիոնար մ'էն է եւ մեծ յաջողութեամբ կը գործէ Շլէզիոյ իր ազգակիցներուն մէջ:

ԻՆՉՊԷՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԳԼՈՒԽ Ժ.

ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՊԱՐԴԵՒԻ ՄԸՆ Է

(Շար. Ե տարի 12րդ Թիւն)

Երբ ես տղայ էի, յաճախ ոտնացուպերու վրայ կը քալէի եւ բաւական կատարեւադործած էի այս դժուարքս, սակայն շարունակ ջանալու էի որ չիյնայի: Ամենափոքր շեղում մը կամ շփում մը ուրիշ առարկայի հետ՝ անկում կը պատճառէր: Ասիկա շատ մը քրիստոնեաներու ընթացքին մէկ պատկերն է— Ջանք, պայքար, դանդաղ յառաջդիմութիւն, շարունակ իյնալ ու ելլել եւ ուրիշներու օգնելու մէջ կատարեալ անկարողութիւն:

Ասիկա անբնական ընթացք մ'ըն է: Քու մէջը բնական Քրիստոսով իւրացուր քեզի յաղթական կեանքը եւ անոր մէջ քալել այնքան դիւրին պիտի ըլլայ քեզ համար, որքան դիւրին է քու ոտքերովդ քալել: Կան զինուորներ որոնց անգամները թէպէտեւ կատարեալ են, սակայն անոնք ռմբակոծուած ըլլալով այնպէս կ'երեւակային թէ այլեւս անկարող են քալելու, ու չեն կրնար քալել: Սակայն վարպետ բժիշկ մը կը յաջողի զանոնք համոզել թէ քալելու կարողութիւնը ունին, եւ ահա կը սկսին քալել: Քրիստոս կը տրամադրէ մեզի Իր զօրութիւնը հաւատքով քալելու, արդեօք չի՞նք կրնար Անոր վստահել:

Անգամ մը 13 տարեկան փոքրիկ աղջկան մը հարցուեցաւ թէ իր յաղթական կեանքը ապրելու սկսելէն յետոյ ի՞նչ տարբերութիւն կը տեսնէր փորձութեանց պարագային: Կարճ լռութենէ մը յետոյ անիկա պատասխանեց՝ «Յաղթական կեանքի ճշմարտութիւնը ըմբռնելէս առաջ սովոր էի փորձելին հետ վիճաբանելու ու ընդհանրապէս անիկա կը յաղթէր ինծի, սակայն հիմա, ամէն անգամ որ անիկա որսիս դուռը բաղիւնելու ըլլայ, Յիսուսին կ'ըսեմ՝ «Տէր Յիսուս, դուն իմ տեղս պատուական կուտամ՝ այդ դուռը բաղիւնողին» ու Ստանան Յիսուսը ներսը տեսնելով կը պատասխանէ՝ «Կը ցաւիմ, կը կարծեմ թէ սխալ դուռ զարկած եմ», ու կը փոխէի»:

ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԷՍ ԿՈՒԳԱՅ

Ինչպէս որ մեր փորձութեանց դէմ միմիայն Քրիստոսով յաղթող կ'ըլլանք, նոյնպէս ալ մեզ շրջապատող Սատանային գործերուն դէմ պատերազմելու միջոցին միայն Քրիստոս է որ կը տանի յաղթանակը եւ ոչ թէ մենք:

«Ի՞նչ է ներկայիս ամենէն վտանգաւոր հերետիկոսութիւնը» հարցուեցաւ օր մը Ամէրիքէն Սընտէյ Սթուլ թալմուսի խմբագրին: Անկիւ ներկայիս շատ մը մոլորեցուցիչ աղանդներէն եւ ոչ մէկը մատնանշելով պատասխանեց՝ «Ամենէն վտանգաւոր հերետիկոսութիւնն է քրիստոնէութիւնը դաւանող անհատներու իրենց Աստուծոյ համար բրածին վրայ շեշտ դնել փոխանակ շեշտելու թէ Աստուած ինչ կ'ընէ իրենց համար»:

Եթէ մեր վարդապետին համար գործել կուզենք՝ յիշելու ենք թէ ոչ թէ մե՛նք ենք որ կ'ընենք Անոր գործը՝ այլ Ինք է որ կը գործէ մեր միջոցով: Բանի որ այսպէս է խնդրը, յաղթական կեանքը ապրող քրիստոնեան յաճախ կ'աղօթէ եւ հաղորդակցութեան մէջ կ'ըլլայ Աստուծոյ հետ կարգաւորվ Անոր սուրբ խօսքը:

Այս գլուխը վերջացնելէ առաջ հարկ է հարցնել թէ մեր յաղթական կեանք մը ապրիլը ի՞նչ ազդեցութիւն պիտի ունենայ ուրիշներու վրայ: Մինչեւ այս կէտին յաղթական կեանքին մեր վրայ կատարած ազդեցութիւնը յիշեցինք եւ եթէ անոր ազդեցութիւնը այսփայտ միայն ըլլար կրկին պիտի բացազանչէինք թէ «Կ'արժէ զայն ապրիլ»:

Սակայն մենք փոր-կուած ենք որպէսզի ծառայենք: Յաճախ կը ստանամ նամակներ քրիստոնեայ այրերէ եւ կիներէ որոնք թելադրութիւններ կը խնդրեն ինձմէ, խոստովանելով թէ իրենք Քրիստոսի համար գործելու կը ջանան, սակայն կը զգան թէ ծառայութեան սպառազինութիւնը չունին:

Տը. Թէմբլ, Մանչեսթրի նոր եպիսկոպոսը, երբ իր պաշտօնին պիտի ձեռնարկէր, ըսաւ «Յիշեցէ՛ք թէ եկեղեցիին հոգիներ կերպարանափոխող գործիւնը կախում չունի գլխաւորաբար անոր քարոզչներու պերճախօսութիւնէն կամ անոր կազմակերպութեան կատարելութիւնէն, հապա երբ որ քրիստոնեաներու կեանքին մէջ Քրիստոսի սիրոյն գործիւնն ապացոյցը կը տեսնէք»: Անկիւ ճշմարիտ է: Երբ մարդիկ տեսնեն Քրիստոսի սէրը որ մեր սիրտերուն մէջ տարածուած՝ կարող եղած է սպաննել մեր մէջի այն մեղքերը որոնք ուրիշներու նեղութիւն կը պատճառեն, անոնք կը սկսին մտածել:

ՄԷՐՆ Է ՅԱՂԹՈՂԸ

Չկայ մարդ մը որուն անկարելի ըլլայ ազդուել սիրոյ գործիւնէն: Աստուածային սիրոյ գործիւնը անասման է: Ամերիկեան պատերազմի միջոցին «Ֆրաթա»-ի մէջ միկտչա՝ կան հասարակ պատուելի մը կը գտնուէր Փէթըր Միլըր անունով, որ Ուաշինկթընի բարեկամութիւնը վայելելու պատիւն ունէր: Նոյն քաղաքին մէջ կը բնակէր նաեւ Միքայէլ Վիթմանը անունով չարամիտ մարդ մը որ իր ամբողջ գործիւնամբ կ'աշխատէր անուանարկելու յիշեալ պաշտօնեան: Վերջապէս օր մը Միքայէլ Վիթմանը քրէական յանցանքի մը մէջ բռնուելով ձերբակալուեցաւ ու մահուան դատապարտուեցաւ: Ծերունի պաշտօնեան 70 մղոնի հեռավորութիւն մը քալելով մինչեւ Ֆիլատելֆիա գնաց այն մարդուն կեանքին համար աղերսելու: Անոր թուարարուեցաւ Ուաշինկթընի առջեւ ներկայանալու, որմէ նա ազերեսց մատնիչին կեանքին համար: «Ո՛յ, Փիթըր» պատասխանեց Ուաշինկթըն, ես չեմ կրնար քու բարեկամիդ կեանքը քեզի նուիրել: «Իմ բարեկամի՞ս», բացազանչեց քարոզիչը, «Անկիւ իմ ամենէն սիրելի թշնամիս է»: «Ի՞նչ», աղաղակեց Ուաշինկթըն, «Ուրեմն դուն 70 մղոն քալեցիր որ թշնամի՞ի մը կեանքը ազատես. տե՛ս, աստիկա բոլորովին տարբեր խնդրի մըն է, անոր ներում պիտի շնորհեմ», եւ շնորհեց: Այսպէս Փիթըր Միլըր Վիթմանը մահուան շու-

քէն ազատելով իր տունը վերադարձուց: Սակայն անկիւ իրեն հետեւեցաւ ոչ այլեւս իբրեւ թշնամի՝ այլ իբրեւ բարեկամ: Ահա սէրը յաջողեցաւ անուանարկողն Վիթմանը կախաղանին ոտքէն խաչին ոտքը փոխադրել:

Ո՛վ քրիստոնեայ գործիչ, մտիկ ըրէ, քու գործիդ մէջ կը տեսնե՞ս այն յաջողութիւնը զոր տեսնել կ'ուզես Քրիստոսի համար: Յայտնի յաջողութիւն մը կը նշմարե՞ս: Եթէ չես նշմարեր, ուրեմն չարժե՞ր թէ՛ քու գործիդ համար, թէ՛ Փրկչին համար եւ թէ՛ կորսուած մեղաւորներուն սիրոյն համար սկսիլ Յաղթական կեանքը:

Նուիրում, Հաւատք, Իւրացում, Գոհութիւն առ Տուիչն ամենայն Բարեաց:

(Շար.)

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԲՐՈՖ. «Ֆ. ՊԵՌԷՔՍ»

Ս. ԳՐՔԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

Ս Կ Ի Ջ Բ Ը

«Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց»:

Անխափն նման ամբողջ մարդկութիւնն ալ յաճախ կանգ կ'առնէ սա կրկնակի հարցմանց առջեւ. «Ուրիշ՞ եւ դէպի ո՛ւր»: Աստուած, որ մարդկային սիրտը ստեղծած եւ անոր բոլոր հարցումներուն տեղեակ է, իր խօսքին միջոցաւ անոնց պատասխանը տուած է: Աստուածաշունչի առաջին գիրքը, Մ'նդոցը, կը պատմէ թէ մենք ուրկէ կուգանք, եւ վերջին գիրքը, Յովհաննոս Յայննոսիւնը, կը ցուցնէ մեզի թէ դէպի ո՛ւր կ'երթանք: Թէեւ ինքզինքնին Աստուծոյ խօսքէն աւելի իմաստուն կարծող մարդիկ ամէն կերպով փորձած են՝ ժխտել այս աստուածային պատասխանը եւ թէեւ մակերեսային քաղաքակրթութիւնը այսօր բարձրագոյն կ'աղաղակէ թէ՛ այժմու գիտութիւնը մարդուն ծագման նկատմամբ տիրող ճիշդ գաղափարը այլեւս մէկզի նեւ տած է եւ կը պնդէ թէ մենք ո՛չ թէ Աստուծմէ, հապա կապիկէն կը սերինք, սակայն «գիտութեան» այս կարծեցեալ «արդիւնները» չապացուցուած եւ իրողութենէն ու շատ մը գլխաւոր բնախոյզներէն հերքուած կարծիքներ են անպիսի մարդոց՝ որոնք զԱստուած թողուցած են եւ ուստի Անկէ լքուած ու իրենց մոլոր խորհուրդներուն ենթարկուած՝ ուրկէ՞ կուգանք հարցման անոնցմէ ոմանք կը պատասխանեն «Չենք գիտեր», իսկ ուրիշներ «Ոչինչէն» իրր թէ «Ոչինչը» կրնար յանկարծ բան մը ըլլալու վնդին գալ: Եւ «Տիեզերքը դէպի ո՛ւր կ'երթայ» հարցման անոնք համարձակ, ազատ կը գոչեն. «Դէպի յաւիտենական գիշերը»:

Սակայն այս ժխտումներուն հակառակ՝ բոլոր ազգերուն ալ ասանդութիւնները սուրբ գրային տեղեկութիւններուն հետ զարմանալիօրէն կը համաձայնին: Հիւսիսային Ասիոյ, Հնդկաստանի եւ Ափրիկէի մէջ ունէ տեղ մը բնիք հանդիպիր գաղափարի մը, որ մեզի խորհիլ տայ թէ հեթանոս ժողովուրդներ մարդուն կենդանիէ մը սերած ըլլալուն կը հաւատան, ընդհակառակն մենք շատ տեղերու մէջ կը գտնենք այն հաւատքն ու ասանդութիւնը թէ առաջին մարդը նախ փառաւոր պարտեզի մը մէջ շատ երջանիկ կ'ապրէր, բայց յետոյ իր յանցանքովն ու մոլորութեամբ ինկաւ եւ ուստի հիմա անէծքի տակ է: Բոլոր հեթանոս կրօններու մէջ մենք կը գտնենք նաեւ այն հաւատքը թէ երկիրը ոչ թէ աստիճանական յառաջդիմութեամբ երկինքի պիտի

վերածուի, հապա նախ տեղի պիտի ունենայ վերջին սոսկալի կռիւը, չարին պարտութիւնը ու աշխարհի դատաստանը, որոնց վերջապէս յաւիտենական երանութիւնը պիտի յաջորդէ: Ժողովուրդներու հին ասանդութեանց մէջ սուրբ գրոց ստեղծագործութեան պատմութիւնն ալ իր նմանները ունի: Այսպէս Հնդկաց ամենահին նուիրական գրքերէն միոյն մէջ գրուած է.— Ան որ ի յաւիտենից է, իր հագին մէկ շարժումովը ամենէն առաջ ջուրը ստեղծեց: Այս պատճառաւ ան ջուրերու վրայ շարժողը կը կոչուի: (Բաղդատել Ծննդ. Ա. 2): «Երբ Ան, Որոն զօրութիւնը անըմբռնելի է, տիեզերքը ստեղծած էր, իր գործունէութիւնը հանգստութեան փոխեց»: (Բաղդ. Ծննդ. Բ. 2): Իսկ պարսկական հին գրութիւնները հետեւեալը կը տեղեկագրեն.— Տեսանելի աշխարհը, երկինք ու երկիր, վեց ժամանակներու մէջ ստեղծուեցաւ: Որովոք, բարին Աստուածը, նախ երկինքի ու երկրի մէջտեղի լոյսը ստեղծեց, ապա ջուրը, որ ամբողջ երկիրը կը ծածկէր, յետոյ ցամաքը, վերջը ամէն տեսակ ծառերը ու հինգերորդ կարգին կենդանիները: Վերջապէս ստեղծուեցաւ նաեւ առաջին մարդը, Քայոմորը՝ դէպի վեր ուղղուած լուսաւոր դէմքով: Բայց չար Ահրիմանը, որ ատենօք իր ստեղծուած աւտեն բարի էր, յուսեղէն աշխարհի մէջ խառարը մտցուց եւ ամբողջ ստեղծագործութիւնը ապականեց:

Գրեթէ բոլոր ժողովրդոց ալ ասանդութիւններուն՝ ջրհեղեղի պատմութեան հետ ունեցած համաձայնութիւնը աւելի ուշագրտ. է: Բացարձակապէս զարմանալի է որ ազգեր, որոնք երկրի հակառակ ծայրերուն վրայ կը բնակին, այս մասին գրեթէ միեւնոյն բաները կը պատմեն. անոնք կը պատմեն հեղեղի մը վրայով, որ բոլոր լեռները կը ծածկէր, մեծ նաւու մը վրայով, որուն մէջ 8 կամ 4 մարդիկ ազատուեցան եւ ան ալ շատ մը համաձայնող մանրամասնութիւններով: Օրինակ. եւրոպացիները հիւսիսային Ամերիկայի մէջ հնդիկ ցեղի մը հանդիպեցան, որոնք վայրի աղանձին նուիրական թաղուն մը կը նկատէին եւ զայն չէին զարներ, եւ երբ պատճառը հարցուեցաւ, անոնք ըսին. «Այս ան թաղունն է, որ մեծ հեղեղին ատեն մեր հօրը՝ մեծ նաւուն մէջ՝ ուռնիի տերեւ մը բերաս»:

Արդ՝ գալով երկրի սկզբնաւորութեան՝ որքա՞ն ուժգին կը հնչէ Աստուածաշունչին առաջին պարզ, բայց վսեմ խօսքը, «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց: Ոչ մէկ մարդկային խորհուրդ կրցած է ատկէ աւելի բարձր սառաւ: Նիլ եւ յաւիտենաւ ալ չպիտի կրնայ: Թէեւ հարիւրաւոր անհաւատ գիտնականներ փորձած են՝ ժխտելու այս նախադասութիւնը եւ ապացուցանելու: Թէ Աստուծոյ գոյութիւնը անհրաժեշտ չէ. «Յաւիտենական Նիւթը» ինքն իր ծոցէն արտադրած է բոլոր արարածներն ու կենդանիները, բայց ո՞վ կը հաւատայ Թէ ասիկա բանաւոր խորհուրդ մըն է: Գիտնականներու երկրի սկզբնաւորութեան մասին կատարած խաղաղութեանց արդիւնքէն իսկ որոշալէս կը յայտնուի Թէ «կեանք» կոչուած, որուն արտայայտութիւնները մենք բոյսերու, կենդանիներու եւ մարդոց մէջ կը տեսնենք, երկրի վրայ ի յաւիտենից գոյութիւն ունեցած չէ: Արդ՝ յանկարծ ուրկէ՞ եկաւ: Մեռեալ Նիւթէն ի՞նչ պէս կրնար կեանք արտադրուի: Ուրէ մէկը դեռ չէ կարողացած զայս բացատրել: Սակայն մենք գիտենք, — քանի որ Աստուած մեզի իր խօսքովը ըսած է, որ ամենակարող, կենդանին Աստուած իր անվախճան կենաց լիութենէն այս երկիր կոչուած մոլորակին վրայ ալ կեանք գոյացուց: Անտարակոյս այս Աստուածը ինքնին անբացատրելի հրաշք մըն է: Մածկուած Աստուած մը: Բայց Աստուած մը, զոր մենք պիտի կարենայինք ըմբռնել, այլեւս Աստուած չպիտի ըլլար: Կեանք կենդանի Աս-

տուծմէն, ահա բանաւոր խորհուրդ մը, որուն մէջ իմաստ կայ: Բայց կեանք մեռեալ Նիւթէն, բացատրութիւնը անիմաստ է:

Արդ, եզրակացնելով կրնանք ըսել Թէ անվախճանէն վախճանելին, յաւիտենականէն ժամանակաւորը, «անտեսանելիէն տեսանելին» (Եբր. 11. 3) եւ անփոփոխելիէն փոփոխելին ծագած է: Այդ պարագային մենք կ'ըմբռնենք նաեւ Թէ ուրկէ՞ եկած են Անվախճանին ու վսեմին հանդէպ մեր կուրծքին տակ ծածկուած զօրաւոր տենջանքն ու ձգտումը, որոնք ուրիշ բան չեն, եթէ ոչ «կեանք»: Անոնք սերած չեն մեռեալ Նիւթէն, եթէ ոչ դէպի մահ պիտի ձգտէինք, հապա Աստուծմէ, որ աղբիւրն է լուսոյ ու կենաց, ուժի ու գիտութեան:

«Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց»: Աստուածաշունչի առաջին տողին այս խօսքը արդէն մեզի յստակօրէն կը ցուցնէ այն կռուանը որուն վրայ հաստատուելու ենք մեր ոտքերը: Ինչպէս որ կարող գրող մը անմիջապէս իր Նիւթին միջոց կ'առնէ եւ իր առաջին նախադասութիւններովն ընթերցողներուն կը պարզէ Թէ ինքը դէպի ուր կը ձգտի, այնպէս կ'ընէ նաեւ Աստուծոյ խօսքը: Այս առաջին խօսքերը մեզի կ'ըսեն Թէ ի՞նչ բանի վրայով պիտի խօսուի ամբողջ Սուրբ Գրոց մէջ. այսինքն վերի եւ վարի, երկնային ու երկրային բաներու վրայով: Այս երկու գաղափարներու, «երկինքի ու երկրի» շուրջը կը դառնայ ամբողջ Սուրբ գիրքը: Ան կը ցուցնէ Թէ այս երկուքը նախ իրարու հետ կատարեալ խաղաղութեան մէջ էին, բայց ապա մեղքի պատճառաւ մէկմէկէ բաժնուեցան, Թէ Աստուած հազարաւոր տարիներ պատրաստութիւններ տեսաւ զանոնք իրարու մօտեցնելու, Թէ սնոնք Յիսուսի միջոցաւ նորէն միացան եւ Թէ վերջապէս երկիրը երկինքի պիտի վերածուի ու նոր երուսաղէմը երկրի վրայ պիտի իջնէ, որպէսզի Աստուած ըլլալ ամէնը ամէն բանի մէջ: Ոչ միայն Աստուածաշունչի, հապա նաեւ բնութեան մէջ մենք կը գտնենք այս երկու տարբերութիւն, երկնաւորի եւ երկրաւորի հակառակութիւնը: Այս երկուքին վրայ կը կենայ երկրի վրայ ապրուած կեանքը: Այսպէս է մարդուն մէջ. դէպի վեր կը ձգտի գլուխը, խորհուրդի գահը, մինչդեռ իր մարմնոյն վարի մասը երկրային, ստորին նպատակներու կը ծառայէ: Մարդուն եւ անասունին միջեւ գտնուող տարբերութիւնն ալ նոյնն է: Մարդը դէպի վեր կը ձգտի եւ երկիրը միայն իր ոտքերովը կը շօշափէ, մինչդեռ անասունը, — մասնաւորապէս ստորին կարգերու պատկանողը, — աւելի հորիզոնական դիրք ունի եւ դէպի վար կը նայի:

«Աստուած սկիզբէն երկինքն ու երկիրը ստեղծեց»: Այս պարզ ու վեհափառ խօսքը կրանիդեայ ապառաժի մը նման կը կանգնի աստուածաշունչի մուտքին, յաւիտենականութենէ դէպի մեր ժամանակը բացուող դրան առջեւ: Մինչեւ այդ ատեն միայն անմեծանալի լուսոյ մէջ բնակող երրորդութիւնը կար: Բայց ատկէ իվեր գոյութիւն ունի նաեւ «ստեղծագործութիւն մը»: Այս հիմը դնելէն յետոյ՝ Սուրբ գիրքը ատենի մը համար մէկդի կը ձգէ երկինքն ու իր զօրքերը եւ մեր ուշադրութիւնը կը հրաւիրէ երկրի վրայ: Միեւնոյն ատեն նա մեզի, երկրաւորներուս կը խօսի երկրային, մարդկային լեզուով: Մեզի, մարդոցս նման ան ալ կ'ըսէ Թէ՝ արեգակը կը ծագի եւ մարը կը մտնէ, մինչդեռ փշղը խօսելով արեգակը չէ որ կ'երթայ հապա երկիրը: Եթէ Աստուած մարդկային լեզուով ու եղանակով չխօսէր, եթէ Ան բացարձակապէս աստուածային լեզու գործածէր, այն ատեն ո՞չ Թէ միայն անուս մարդը, հապա նաեւ ամենամեծ գիտնականը չպիտի կարենար բան մը հասկնալ եւ իր խօսքը ամենանշանաւոր աստղագետին ալ անըմբռնելի պիտի մնար: (Շար')

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

Աստուածաշունչը, աշխարհի վրայ գտնուած բոլոր միւս գրքերէն տարբեր բան մըն է: Անոր հեղինակը Յաւիտենական Աստուածն է: Մէկը որ Անոր մէկ մասին կը հաւատայ, ստիպուած է նաեւ Անոր ամբողջութեանը հաւատալ:

Սուրբ գիրքը կատարելապէս իմաստուն, անհունապէս մեծ, եւ էովին Սուրբ Աստուծոյ մը կամքին եւ նկարագրին յայտնութիւնն է:

Մարդիկ որքա՛ն յաճախ այրած են Սուրբ գիրքը, շատեր իրենց օրերը Անոր կարծանման եւ անհետացման համար աշխատելով անցուցած են: Բայց անիկա այսօր աշխարհի բոլոր գիտութիւններէն եւ իմաստութիւններէն աւելի պայծառ կը շողայ:

Ան դիմադրած է դարաւոր հալածանքներու եւ այսօր ուրիշ որեւէ գրքէ աւելի կը շրջաբերի:

Անիկա այն մինակ գիրքն է որ հոգւոյն խաղաղութիւն, հանգստութիւն, եւ փրկութիւն կը բերէ:

Անով է որ ամէն մարդ պիտի գատուի դատաստանին մեծ օրուան մէջ:

ՍՈՒՐԲ ԸՆԾԱՆԵՐՈՒՆ ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԸ

Եւ անիկա Ահարոնի ճակատին վրայ պիտի ըլլայ, որ Իսրայէլի որդիներուն նուիրած բոլոր սուրբ ընծաներուն անօրէնութիւնը Ահարոն կրէ, ու միշտ իր ճակատին վրայ պիտի ըլլայ, որպէսզի անոնք ընդունեն ըլլան Տէրոջը առջեւ:

(Եւրեյ ԻԸ. 38)

Ինչպիսի՛ վարագոյր մը վերցուած է այս բառերով եւ ինչպիսի՛ յայտնութիւն մը եղած: Որքա՛ն շահեկան պիտի ըլլայ քիչ մը կանգ առնել եւ տեսնել այս տխուր անսարանը եւ խոնարհիլ անոր առջեւ:

Մեր հրապարակաւ երկրպագութեան անօրէնութիւնը, անոր կեղծաւորութիւնը, ձեւակերպութիւնը, գաղթութիւնը, անպատկառութիւնը, սրտի մոլորութիւնն ու գԱստուած մոռնալը: Ինչպիսի՛ լեցուն չափ մը ունինք:

Տէրոջը համար մեր գործը, (անոր մէջ մեր նախանձախնդրութիւնը), ասամոլութիւնը, անհոգութիւնը, գանդաղութիւնը, անհաւատութիւնը: Աղտեղութեան ինչ մեծ կոյտ մըն է այս:

Մեր անհատական բարեպաշտութիւնը, գաղտնի անձնութիւնը, անոնց թուութիւնը, պաղութիւնը, գանցառութիւնը, ծուլութիւնը եւ ունայնութիւնը: Մեռած գործերու ինչպիսի՛ լեռ մըն է այս: Եթէ աւելի զգուշութեամբ նայինք՝ պիտի հասկնանք որ այս անօրէնութիւնը առաջին ակնարկով երեւցածէն շատ աւելի մեծ է: Պատուելի մը կ'ըսէ. «Իմ թեմա եւ սիրաս կը նմանին ծոյլ պարտիզպանի մը պարտէզին, եւ

ինչ որ աւելի գէշ է՝ կը տեսնեմ որ ասոնց երկուքն ալ բարեփոխելու համար ունեցած իմ փափաքներս իսկ՝ կը բղխին կամ հպարտութենէ կամ ունայնութեան զգացումէ, կամ անտարբեր անզգայութենէ: Իմ պարտէզս ծածկած անպէտ խոտերուն նայելով՝ շատ կ'ըղձամ լըջօրէն արմատախիլ ընել զանոնք, բայց ինչո՞ւ: Այս փափաքը ինձ ներշնչող զրգապատճառը ի՞նչ է: Թերեւս՝ որպէսզի անոր մէջ քալիմ եւ ինքզինքիս ըսեմ. իմ պարտէզս ի՞նչ գեղեցիկ խնամուած է: Ասիկա ունայնութիւնն է: Կամ թերեւս անպէտ խոտերուն ջնջուիլը կ'ուզեմ, որովհետեւ զանոնք քաշելէն ալլելու ձանձրացած եմ: Ասիկա անզգայութիւնն է: Այսպէս որ՝ սուրբ ըլլալու համար մեր փափաքներն իսկ կրնան սպաւանութիւն անպիտան զրգապատճառներէ: Ամենականն խոտերու տակ իսկ որդեր կը պահուին. զանոնք գտնելու համար երկար փորելու հարկ չկայ: Ի՞նչ ուրախացուցիչ է սա խորհուրդը թէ քահանայապետը սուրբ բաներուն անօրէնութիւնը կրած ատեն՝ իր ճակատին վրայ կը կրէր «Սրբութիւն Տեառն» բառերը. ճիշդ այսպէս՝ երբ Յիսուս մեր մեղքերը կը կրէ՝ Իր Հօրը երեսին առջեւ կը ներկայացնէ ոչ թէ մեր անսրբութիւնը, այլ բուն իսկ իր սեփական սրբութիւնը: Ո՛հ թէ կարենայինք մեր մեծ Քահանայապետը հաւատքի աջքով տեսնել:

C. H. Spurgeon

ԶԳՄԵՂԱՆՔԻ ԽՕՍՔԵՐ

ԵՒ ԱՆՈՆՅ ՊԵՏԱՍԽԱՆԸ

Ես ալ քրիստոնեայ եմ, այդքան ալ անաստուած չեղայ.—

Պատասխան.— Շատերը այն օրը ինծի պիտի ըսեն, Տէր, Տէր, չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք, եւ քու անունովդ դեւեր հանեցինք, ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք: Եւ այն ատեն անոնց յայտնապէս պիտի ըսեմ թէ ես բնաւ ձեզ չէի ճանչնար, մէկդի պացէք քովէս զուք որ անօրէնութիւն կը գործէիք: (Մատթ. է. 22, 23):

Այդ բոլոր մեղաւորներուն հաւասարելով՝ չեմ կրնար միեւնոյն մեղաւորի ամոռին վրայ նստիլ եւ իբր այն՝ փրկութիւն փնտռել.—

Պատասխան.— Եւ մէկ քանիներուն, որոնք իրենց անձերուն վրայ կը վստահանային թէ արդար են, եւ ուրիշները կ'անարգէին, այս առակը ըսաւ. Երկու մարդ ելան տաճարը աղօթք ընելու, մէկը փարիսեցի թէ միւսը մաքսաւոր: Փարիսեցին կայնիւ էր, ու առանձին այսպէս աղօթք կ'ընէր. «Ով Աստուած, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, եւ կամ այս մաքսաւորին պէս. հապա շաբաթը երկու անգամ ծոմ կը պա-

հեմ, ու բոլոր ստացուածքիս տասանորդը կուտամ»։ Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր, ու չէր ուզեր աչքն ալ երկինք վերցնել, հապա իր կուրծքը ծեծելով կ'ըսէր, «Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս»։ Ձեզի կ'ըսեմ թէ ասիկա այն միւսէն աւելի արդարացած իր տունը իջաւ. վասնզի ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ։ (Ղուկ. ԺԸ. 9-14)։

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԾՆՈՒՆԴԻ ԱԳՈՒՄԻՆԸ

Ծնունդի նախօրեակն էր։ Քաղաքին փողոցները ձիւնով ծածկուած էին եւ ցուրտը սաստիկ էր։ Գետնայարկի պզտիկ սենեակի մը մէջ՝ աղքատ ուրիշ կին մը եւ անոր չորս զաւակները սեղանին շուրջ բոլորուած կուլային, վասնզի հոն ուտելիք բան չկար։

Այս տօն օրուան մէջ, երբ իւրաքանչիւր ընտանիք հաւաքաբար ուրախութեամբ կը ճաշէր՝ երբ մանուկները ծնունդի ծառերուն շուրջ կ'երգէին՝ եւ երբ քրիստոնեայ սրտեր Փրկչին ծնունդը կը տօնէին փառաբանութեամբ՝ հոն, այս խեղճուկրակ եւ ցուրտ սենեակին բնակիչներուն ծնունդի բաժինը միայն թախիծն էր։

Տղոցմէ ամենէն մեծը իր մօրը ըսաւ.—

«Մայր, ինծի Ս. գիրքէն Եղիայի աղուոր պատմութիւնը չկարդացի՞ր, թէ ինչպէս Աստուած ազուաւ մը զրկեց՝ որ անոր հաց եւ միս բերէ։ Եթէ ես ալ Աստուծոյ խնդրեմ որ այս իրիկուն մեզի ազուաւ մը զրկէ, պիտի չընէ՞ . . . »։

Մայրը, որ այսպիսի դէպքի մը տեղի ունենալուն շատ հաւատք չունէր՝ վարանելով ըսաւ. «Է, եթէ ատոր հաւատալու չափ վստահութիւն ունենաս՝ այո»։

Պզտիկը անմիջապէս քովի սենեակը գնաց, իր անկողնին քով ծունկի եկաւ՝ եւ ըսաւ. «Տէր Յիսուս, մեզի այս իրիկուն, Եղիա մարգարէին զրկածիդ պէս ազուաւ մը զրկէ, որ մեզի ուտելիք բերէ. կ'աղաչեմ քեզի Տէր, ասիկա ըրէ, ամէն»։ Յետոյ գոհ սրտով իր մօրը քով վերադարձաւ, եւ անոր գիրկը նետուելով ըսաւ. «Այ մի լար»։ Յետոյ գնաց փողոցին դուռը կոնակին վրայ բացաւ եւ անոր առջեւ կեցաւ, ձեռքերը ծալլած, լուսալից սպասելով ծննդեան ազուաւին։

Ժամը գիշերուան տասն էր եւ փողոցը ամայի։ Վերջապէս ոտնաձայն մը լսուեցաւ. մարդ մը կուգար։ Երբ նա տան դուռը այսքան ուշ ատեն բաց՝ եւ տղան ալ անոր շեմին վրայ ոտքի կեցած նշմարեց, կանգ առաւ, ու ներս մտնելով տեսաւ որ շատ պզտիկ լապտեր մը կը վառէր, «Չոք ի՞նչ կ'ընես» հարցուց տղուն։

— «Կը սպասեմ ազուաւին որ այս իրիկուն մեզի հաց պիտի բերէ». պատասխանեց ան։

«Ազուաւը. ի՞նչ ըսել կ'ուզես», ըսաւ մարդը, եւ սենեակը մտաւ։ Տղուն մայրը քիչ մը շուարելով պատմեց ինչ որ քիչ առաջ տեղի ունեցած էր։ Մարդը այնքան ազդուեցաւ՝ որ իր աչքերը արցունքով լեցուեցան։ Յետոյ իր սեւ հագուստին նայեցաւ. (ինքը այդ տեղի քաղաքապետն էր). «Իրա՛ւ ալ, ես ազուաւի մը պէս սեւ եմ, անկասկած զիս է որ Աստուած կը զրկէ. կողով մը առ եւ հետս եկուր պզտիկ բարեկամս» . . . :

Մանուկը վերադարձաւ՝ կողովը միտով եւ հացով լեցուն, եւ ներս մտած ատեն ուրախ ձայնով մը ըսաւ.

«Կը տեսնե՞ս, մայր, որ Աստուած աղօթքիս պատասխանեց»։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատուած է թէ Քորէայի բնակչութեան առ հարիւր երկուքը արհեստով մուրացիկներ են. մեծագոյն մաս մըն ալ որբեր են, առ հարիւր ութը կամ ինն ալ աղքատ դասակարգէն. ճշգրտած ալ է թէ երկրին բերրի մասին եօթանասուն եւ հինգ առ հարիւրն ալ Ճաբոնացի հարուստ հողատէրերու կը վերաբերի։ Իսկ ժողովուրդին մեծագոյն մասն ալ միայն իւր մշակներ եւ հողագործներ կ'աշխատին այդ ագարակներուն մէջ տարեկան երեք հազար ֆրանքի մօտ վաստակով մը։ Այսու ամենայնիւ Քորէայի եկեղեցին անցեալ տարի մայր երկրին եկեղեցական ծախքերէն զատ տասնըհինգուկէս միլիոն ֆրանք տուաւ այն միսիոնարներուն համար, որոնք Սիպերիա ու Չինաստանի Շուիանի նահանգը ակտարանելու գացած են։

Այս թուանշանները զմեզ կ'ամչցեն. կ'ուզենք մեր եկեղեցիներուն ալ հարցնել թէ մեր ներքին ծախքերէն զատ որքա՞ն կուտանք ուրիշ գործերու, ուրիշ երկիրներու եւ միսիոնարութեանց։

— Մեզի Ամերիկայէն կը գրէ Մը. Րիկզ թէ Հայ աւետարանական ընկերութեան շրջիկ քարտուղար Վեր. Մ. Կ. Փափազեան, Արեւելեան եկեղեցիներու այցելութեան համար Դեկտ. 14 ին ճամբայ ելած է։ Իր առաջին այցելիքները պիտի ըլլան Ֆրանսոսայ Աւետ. եկեղեցիները։ Կը յուսանք թէ Վեր. Փափազեան Ծնունդի կամ Նոր տարուան առթիւ Բարիզ պիտի գտնուի։

— Համաշխարհային Աւետարանական Աղօթքի Միութեան այս տարուան եօթնեակի ժողովները տեղի պիտի ունենան ամսոյ 5 էն մինչեւ 11։

ԿԱՐԵԻՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ.— «Բանբեր»ի այս առաջին թիւէն Ձեզի ալ կը զրկենք, սպասելով Ձեր ապաւանքին։ Հաճեցէք նաեւ յիշել թէ հայերէն եւ թուրքերէն մասերը միասին կ'ուզէք, թէ միայն մէկ լեզուով եւ ո՞րը։ Միեւնոյն ատեն գոհ պիտի ըլլայինք, եթէ Ձեր բաժնեգինը միասին զրկէիք, զմեզ աւելորդ դժուարութիւններէ եւ հոգերէ ազատ պահելով։ Քանի մը օրէն լոյս պիտի տեսնէ 8 էջոց «Բանբեր»ի 3-րդ թերթիկը «Կեանքի տեղ կեանք» սրտաշարժ եւ շահեկան պատմութիւն մը. ուղղորդուելու ձրի պիտի զրկուի։

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Տպգր. «ԲԱՆԲԵՐ»-ի, 29, Րիւ Պօշէ